Հավելված

ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 28 -ի նիստի N 54
արձանագրային որոշման

Դրամաշնորհային համաձայնագիր

Հայաստանի Հանրապետության կառավարության

և

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA)

միջև

Հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման նպատակով՝
Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի
սարքավորումների բարելավման ծրագրի վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության սոցիալական և տնտեսական զարգացման նպատակով ճապոնական տնտեսական համագործակցությանն առնչվող՝ Ճապոնիայի և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև (ամսաթիվ, տարեթիվ) հայտագրերի փոխանակմամբ կնքված համաձայնագրի (ՀՓ) և Ճապոնիայի օրենքներին ու կանոնակարգերին, ինչպես նաև բյուջետային հատկացումներին համապատասխան, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (այսուհետ՝ ՃՄՀԳ) և Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Ստացող) համաձայնվում են ստորագրել հետևյալ դրամաշնորհային համաձայնագիրը (այսուհետ՝ ԴՀ):

Հոդված 1

Դրամաշնորհի գումարի չափն ու նպատակը

ՀՓ-ի 1-ին պարագրաֆի (1) ենթապարագրաֆում նշված «Հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման նպատակով՝ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի սարքավորումների բարելավման»

նախագծի իրականացման համար ՃՄՀԳ -ն Ստացողին կտրամադրի վաթսուն ինը միլիոն յոթ հարյուր հազար ճապոնական իենի (69 000, 000 ճապոնական իեն) չափով դրամաշնորհ (այսուհետ՝ դրամաշնորհ), որի վերաբերյալ մանրամասները նկարագրված են ստորև կցված Պլան 1-ում:

Հոդված 2

Դրամաշնորհի հասանելիությունը

Որպես ՃՄՀԳ-ի կողմից վճարման ձև, դրամաշնորհը հասանելի կլինի ԴՀ-ի ուժի մեջ մտնելուց հետո մինչև /ամիս, ամսաթիվ, տարի/ ընկած ժամանակահատվածում:

Հոդված 3

Դրամաշնորհի օգտագործում

Ստացողը պետք է օգտագործի դրամաշնորհը պատշաճ կերպով և բացառապես 2-րդ պլանի 2-րդ բաժնում նկարագրված իրավասու ազգություն ունեցող մատակարարներին, կապալառուներին և/կամ խորհրդատուներին (այսուհետ՝ Մատակարարներ) վճարելու նպատակով՝ 2-րդ պլանի 3-րդ բաժնում նկարագրված իրավասու աղբյուր հանդիսացող երկրներից գնելու անհրաժեշտ ծառայություններ և ապրանքներ՝ ծրագրի իրականացման համար:

Հոդված 4

Դրամաշնորհի ղեկավար մարմին

(1) (Եթե ԴՀ-ի ստորագրող կողմը գործադիր մարմին չէ) Ստացող կողմը պետք է նշանակի գործադիր մարմին՝ ի դեմս Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի, (այսուհետ՝ գործադիր մարմին), որպեսզի ծրագիրն իրականացվի Ստացողի անունից: Ստացող կողմը պետք է հետևի, որպեսզի գործադիր մարմինն իրականացնի Ստացողի կողմից ստանձնած ցանկացած պարտավորություն, և վերջինս պետք է ստանձնի պատասխանատվություն ծրագրի գործադիր մարմնի՝ նախագծին առնչվող բոլոր գործողությունների համար:

(2) Ստացող կողմը պետք է ունենա ծրագրի իրականացման խորհրդատու: Խորհրդատուն պետք է տրամադրվի Ստացող կողմին ՃՄՀԳ-ի կողմից: ՃՄՀԳ-ի կողմից խորհրդատուի տրամադրումը չի ենթադրում, որ ՃՄՀԳ-ն պետք է ստանձնի այն պարտավորությունները, որոնք խորհրդատուն ստանձնում է Ստացող կողմին աջակցություն ցուցաբերելու ժամանակ:

(3) Եթե դրամաշնորհի ֆինանսավորումը բավարար չէ ծրագրի իրականացման համար, ապա Ստացող կողմը պետք է անհրաժեշտ միջոցառումներ իրականացնի անհրաժեշտ գումարի ձեռքբերման համար:

Հոդված 5

Ընդհանուր պայմաններ

(1) ՃՄՀԳ-ն և Ստացող կողմը պետք է շարժվեն ՃՄՀԳ-ի ճապոնական դրամաշնորհի ընդհանուր պայմանների (այսուհետ՝ ԸՊ) դրույթներով, որոնք հաստատվել են 2016թ. հունվարին:

(2) ԸՊ-ի 2.01 բաժնում տեղ գտած գնումների գործընթացի մանրամասները ներկայացված են ստորև կցված պլան 2-ում:

(3) ԸՊ-ի 3.01 բաժնում տեղ գտած վճարման գործընթացը նկարագրվում է կից ներկայացվող 3-րդ պլանում:

(4) ԸՊ-ի 3.01 բաժնում տեղ գտած հասցեներն են.

ՃՄՀԳ-ի դեպքում՝

Փոստային հասցե՝

Ուզբեկստան, 100084, Տաշքենդ, Ամիր Թեմուր պողոտա, 107-Բ, միջազգային բիզնես կենտրոն, 5-րդ հարկ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ուզբեկստանի գրասենյակ

Լիազոր մարմին՝ գլխավոր ներկայացուցիչ

կրկնօրինակը՝

Ճապոնիա, Տոկիո 102-8012, Շիյոդա-կու, Նիբան-Զո, 5-25

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համագործակցության իրականացման վարչություն

Լիազոր մարմին՝ գլխավոր տնօրեն

Ստացող կողմի դեպքում՝

Փոստային հասցե՝

Լիազորված կազմակերպության անվանում՝ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

Գտնվելու վայրի հասցե՝ Երևան, Փավստոս Բյուզանդի 1/3

Լիազոր մարմին՝ պատասխանատուի անունը, ազգանունը և պաշտոնը -----

Գործադիր մարմնի դեպքում

Փոստային հասցե՝

Լիազորված կազմակերպության անվանում՝ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

Գտնվելու վայրի հասցե՝ Երևան, Փավստոս Բյուզանդի 1/3

Լիազոր մարմին՝ պատասխանատուի անուն, ազգանուն և պաշտոն:

Հոդված 6

Ստացող կողմի այլ պարտավորությունները

(1) Ստացող կողմը պետք է կատարի պլան 2-ի 4-րդ բաժնում և պլան 4-ում նկարագրված պարտավորությունները:

(2) Ստացող կողմը պետք է երաշխավորի, որ ոչ մի պաշտոնյա չի իրականացնելու Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գնման մասին պայմանագրով նախատեսված որևէ աշխատանք:

(3) Համաձայն ՃՄՀԳ պահանջների, ձևի և մանրամասնության, մինչև ծրագրի ավարտը Ստացող կողմը ՃՄՀԳ-ին պետք է տրամադրի ծրագրի իրականացման առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններ՝ ըստ համաձայնեցված ժամանակացույցի: Ծրագրի ավարտից հետո՝ ոչ ուշ քան 6 ամիս անց, Ստացող

կողմը ՃՄՀԳ-ին պետք է տրամադրի ծրագրի ավարտի վերաբերյալ հաշվետվություն այն ձևով և մանրամասնությամբ, որը ՃՄՀԳ-ն կարող է պահանջել:

Հոդված 7

Վերնագրեր

Հոդվածների վերնագրերը զետեղված են սույն փաստաթղթում միայն հարմարավետ անդրադարձման համար և չպետք է մեկնաբանվեն որպես սահմանափակման կամ ԴՀ-ի դրույթների վրա այլ կերպ ազդելու միջոց:

Սույնով ՃՄՀԳ-ն և Ստացող կողմը, գործելով իրենց պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, Երևանում կնքում են ԴՀ-ն իրենց անուններից պատշաճ կերպով՝ ըստ վերոնշյալ ամսաթվի և տարեթվի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
_____	_____
(Անուն, ազգանուն) (պաշտոն)	Կացուտոշու Ֆուշիմի գլխավոր ներկայացուցիչ Ուզբեկստանում ՃՄՀԳ-ի գրասենյակ

Պլան 1

Ծրագրի մանրամասներ

(1) Նպատակ՝

Ծրագրի նպատակն է պատշաճ կերպով ապահովել Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի /այսուհետ՝ Կենտրոն/ հայտնաբերած /պեղած/ հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման գործընթացները՝ բարելավելով սարքավորումները իրականացնելու հնագիտական գտածոների վերականգնումն ու պահպանումը: Այսպիսով նպաստում ենք Հայաստանի Հանրապետությունում հասնելու մշակութային ժառանգության հավասարակշիռ և էական զարգացմանը, պահպանելով այն՝ խթանել մարդկանց հետաքրքրությունն իրենց երկրի պատմությանն ու մշակույթին:

(2) Տեղանքը

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

(3) Աշխատանքի ծավալը՝

(ա) հնագիտական գտածոների վերականգնման և պահպանման համար սարքավորումների գնում

(բ) խորհրդատվական ծառայություններ:

Պլան 2

Գնումների մանրամասները

Բաժին 1՝ Դրամաշնորհի ներքո գնումների գործընթացի համար կիրառվող ուղեցույց

Դրամաշնորհի պատշաճ և նպատակային օգտագործումն ապահովելու համար Նախագծի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները և ծառայությունները պետք է ձեռք բերվեն ըստ ՃՄՀԳ-ի ճապոնական դրամաշնորհների (տեսակ 1) գնումների գործընթացի ուղեցույցի, որը հաստատվել է 2016թ. հունվարին (այսուհետ՝ **գնումների ուղեցույց**):

Բաժին 2՝ Իրավասու ազգություն

(1) Իրավասու մատակարարներն ազգությամբ պետք է լինեն ճապոնացի, երբ ուղղակիորեն ծրագրի իրականացման համար Ստացող կողմի հետ պայմանագիր են կնքում:

(2) Կապված վերոնշյալ 1-ին ենթաբաժնի հետ՝ «Ճապոնիայի քաղաքացի» տերմինը նշանակում է ճապոնացի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր վերահսկվում են ճապոնացի ֆիզիկական անձանց կողմից, ինչպես նկարագրված է ՀՓ-ի 4-րդ պարագրաֆում:

(3) Պայմանագրերը, որոնք տեղ են գտել 1-ին ենթաբաժնում, պետք է արտահայտվեն ճապոնական իենով:

Բաժին 3՝ Իրավասու աղբյուր հանդիսացող երկրներ

(1) Ծրագրի իրականացման համար ապրանքների և ծառայությունների գնումների համար իրավասու աղբյուր հանդիսացող երկրները պետք է հանդիսանան Ճապոնիան և Ստացող կողմը:

(2) Չնայած 1-ին ենթաբաժնի՝ ծրագրի իրականացման համար տրամադրվող դրամաշնորհը կարող է օգտագործվել, բացի Ճապոնիայից կամ Ստացող կողմից, այլ երկրներից ապրանքներ և ծառայություններ գնելու համար, եթե ճապոնական և Ստացող կողմերը հարկ համարեն:

Բաժին 4՝ ՃՄՀԳ-ի վերանայում

Կապված Ստացող կողմի գնումների գործընթացների և որոշումների հետ՝ Ստացող կողմն անհրաժեշտության դեպքում պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը ՃՄՀԳ-ի վերանայմանը և համաձայնեցմանը: Համաձայն ՃՄՀԳ-ի պահանջների՝ Ստացող կողմը նաև պետք է ներկայացնի ցանկացած առնչվող փաստաթուղթ և տեղեկատվություն: Եթե ՃՄՀԳ-ն ոչ մի առարկություն չունենա փաստաթղթերի վերաբերյալ, ապա կտեղեկացնի Ստացող կողմին իր համաձայնության վերաբերյալ: ՃՄՀԳ-ի իրավունքն է կատարել այդպիսի վերանայում, և համաձայնեցումը չպետք է համարվի ՃՄՀԳ-ի պարտավորությունը: Ստացող կողմը չպետք է ազատվի ՃՄՀԳ-ի ընտրությամբ այդպիսի վերանայում իրականացնելու պատճառով ԴՀ-ի ցանկացած պարտավորությունից:

(1) Խորհրդատուների հետ պայմանագրերի իրականացում

Խորհրդատուի բուն պայմանագիրը պետք է ներկայացվի անմիջապես ստորագրման գործընթացից հետո, որպեսզի պայմանագիրը դրամաշնորհի համար վավեր ճանաչվի:

(2) Մրցակցային առաջարկներից զատ այլ գնումների գործընթացներ

Մրցակցային առաջարկներից զատ այլ գնումների գործընթացների նկարագրերը պետք է ներկայացվեն նախքան այդպիսի գործընթացներ սկսելը, երբ մասնավոր դեպքերը մրցակցային առաջարկները վերածում են ոչ պատշաճ գործընթացի:

(3) Նախապես երաշխավորված հանրային հայտարարություն

Նախապես երաշխավորված հանրային հայտարարության բովանդակությունը պետք է ներկայացվի նախքան հանրային հայտարարություն կատարելը: Հանրային հայտարարության համար գործածվող փաստաթղթերի ցանկացած կարևոր փոփոխություն նույնպես պետք է ներկայացվի նախքան առաջնահերթ մրցակիցներին փաստաթղթեր ուղարկելը:

(4) Նախնական որակավորման ընտրություն

Նախապես երաշխավորված ընկերությունների ցանկը, այն ընկերությունների ցանկն է, որոնք պետք է ընտրվեն որպես մատակարարներ. (ii) ընտրման գործընթացի հաշվետվությունը, այդ թվում՝ ընտրության ընթացքում Ստացողի կողմից կայացված որոշումները և (iii) այլ համապատասխան փաստաթղթերը պետք է ներկայացվեն անմիջապես ընտրությունից հետո՝ նախքան հայտատուների երաշխավորման արդյունքների ծանուցումը:

(5) Առաջարկների գործընթացներ

Առաջարկների փաստաթղթերի փաթեթը, ինչպիսիք են՝ հայտատուների ծանուցումները և հրահանգները, առաջարկի ձևը, առաջարկի գնահատման չափանիշների և առաջարկված պայմանագրի նախագիծը, պետք է ներկայացվեն նախքան առաջարկի ներկայացմանը հրավիրելը: Նշված փաստաթղթերի ցանկացած կարևոր բարեփոխում նաև պետք է ներկայացվի, նախքան փաստաթղթերը կուղարկվեն համապատասխան հայտատուներին:

(6) Տեխնիկական առաջարկների վերլուծություն

Տեխնիկական առաջարկների վերլուծությունը պետք է ներկայացվի անմիջապես վերլուծության իրականացումից հետո՝ նախքան առաջարկման գների հրապարակմանը հրավիրելը:

(7) Առաջարկվող գների վերլուծություն

Առաջարկվող գների վերլուծությունը պետք է ներկայացվի անմիջապես վերլուծության իրականացումից հետո, ինչպես նաև նախքան հաջող մրցակցի մրցանակի մասին ծանուցումը:

(8) Մատակարարների պայմանագրերի իրականացում

Մատակարարների համար պայմանագրի բնօրինակը պետք է ներկայացվի ստորագրումից անմիջապես հետո, որպեսզի այն դրամաշնորհի համար վավեր լինի:

(9) Դրամաշնորհի մնացած հաշվեկշռի վերաբաշխում

Հիմնվելով որևէ պատճառի վրա՝ դրամաշնորհի մնացած հաշվեկշռի վերաբաշխման վերանայման և համաձայնեցման հայցը պետք է ներկայացվի ՃՄՀԳ-ին՝ նախքան դրամաշնորհի մնացած հաշվեկշռի գործածման առնչությամբ գործողություն ձեռնարկելը:

(10) Պայմանագրի փոփոխում կամ դադարեցում

(ա) Պայմանագրի ժամկետի երկարացումը և պատճառը, որով արդարացվում է այդ առաջարկը, պետք է ներկայացվի նախքան պայմանագիրը փոխելը. այն դեպքերում, երբ պայմանագրի երկարացված ժամկետը 3 ամսից ավելին է կամ կա ընդլայնված պայմանագրի ժամկետի ավարտի, ինչպես նաև դրամաշնորհի 6 ամիս քիչ վերջնաժամկետի միջև եղած ժամանակահատված:

(բ) Պայմանագրի ցանկացած խոշոր փոփոխության կամ դադարեցման վերաբերյալ ծանուցում պետք է անմիջապես տրամադրվի ՃՄՀԳ-ին, իսկ պայմանագրի բնագիրը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը պետք է ներկայացվեն ստորագրելուց հետո, որպեսզի դրամաշնորհի համար պայմանագրի փոփոխությունը վավերացվի:

(11) Հիմնական նախագծի ձևափոխում

Ծրագրի հիմնական նախագծի ձևափոխման ցանկացած նկարագիր պետք է ներկայացվի՝ նախագծի ձևափոխմանն առնչվող ցանկացած աշխատանքի իրականացումից առաջ:

Կասկածներից խուսափելու նպատակով՝ ցանկացած փոփոխություն, որը չի բերում նախագծի կամ պայմանագրի հիմնական փոփոխության, ինչպես հատկանշված է ՃՄՀԳ-ի կողմից, չի պահանջում ՃՄՀԳ-ի համաձայնեցումը:

Պլան 3

Վճարման գործընթաց

Բաժին 1՝ Բանկային գործարքներ և վճարման լիազորագիր

Ստացող կողմը պետք է կատարի բանկային գործարքներ (այսուհետ՝ բանկային գործարք) Ճապոնիայում գտնվող բանկի հետ (այսուհետ՝ գործակալի բանկ) և բացի հաշվեհամար (այսուհետ՝ դրամաշնորհի հաշվեհամար) գործակալի բանկում ԴՀ-ի ստորագրումից անմիջապես հետո: Բանկային գործարքը սահմանափակում է գործակալ բանկի և Ստացող կողմի դերը՝ ՃՄՀԳ-ի դրամաշնորհի ստացման և դրամաշնորհի շրջանակներում վճարման լիազորագրով մատակարարների վճարման հետ կապված: Ստացող կողմը պետք է ապահովի գործակալ բանկին վճարման լիազորագրով՝ ՃՄՀԳ-ի կողմից հաստատված յուրաքանչյուր պայմանագրի հետ կապված:

Բաժին 2՝ Գործընթաց

Վճարումը պետք է կատարվի մատակարարների հայցի հիման վրա: Մատակարարի կողմից վճարման հայցը և այլ պահանջվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն Ստացող կողմի կողմից վճարման լիազորագրով լիազորված գործակալ բանկին, և, ըստ դրա, այդ փաստաթղթերը պետք է ներկայացվեն ՃՄՀԳ-ին: ՃՄՀԳ-ն պետք է ներկայացված վճարման հայցը և մնացած պահանջվող փաստաթղթերը հաստատելուց հետո ճապոնական իենով վճարի պահանջված դրամաշնորհի գումարը դրամաշնորհի հաշվեհամարով: Գործակալ բանկը պետք է վճարի Ստացող կողմի անունից մատակարարներին դրամաշնորհի հաշվեհամարից՝ դրամաշնորհը ստանալուց հետո:

Պլան 4

Ստացող կողմի պարտավորությունները

ՀՓ-ում տեղ գտած Ստացող կողմի պարտավորությունների համաձայն՝ Ստացող կողմը պետք է ստանձնի ներքոնշյալ սյունակում թվարկված պարտավորությունները: ՀՓ-ում տեղ գտած պարտավորությունների շրջանակներում ՃՄՀԳ-ն և Ստացող կողմը ժամանակ առ ժամանակ կարող են առանձին-առանձին կետերի, վերջնաժամկետների և այլ հարցերի առնչությամբ գրավոր համաձայնության գալ:

(1) Ստացող կողմի հատուկ պարտավորությունները, որոնք չի կարելի գտնել դրամաշնորհում:

1) Նախքան առաջարկը

N.	կետեր	վերջնաժամկետ	պատասխանատու	հաստատված գինը	Անդրադարձ
1	Բացել բանկային հաշիվ (Բանկային գործարք (ԲԳ))	ԴՀ ստորագրելուց հետո 1 ամսվա ընթացքում	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ	ճապոնական իեն	
2	Տրամադրել խորհրդատուի վճարման համար վճարման լիազորագիրը բանկին (գործակալի բանկին)	Խորհրդատուի հետ պայմանագիրը կնքելուց հետո 1 ամսվա ընթացքում	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ	ճապոնական իեն	

	Ճապոնիայում				
3	Ներկայացնել հեռևյալ կոմիսիաները Ճապոնիայի բանկին բանկային ծառայությունների համար հիմնված գործակալի բանկին (Գ/Բ)				
	Խորհրդատվական կոմիսիոն վճար	Պայմանագիրը կնքելուց հետո 1 ամսվա ընթացքում	Կենտրոն	~ 5 000 ճապոնական իեն	
	Վճարման կոմիսիոն վճարման լիազորագրի համար	բոլոր վճարումները	Կենտրոն	Ընդհանուր ~ 80 000 ճապոնական իեն	
4	Ապահովել բավարար տարածք, որն անհրաժեշտ է Ծրագրի իրագործման և պեղավայրի մաքրման համար	Նախքան մրցակցային փաստաթղթի գրանցումը	Կենտրոն		
5	Ներկայացնել ծրագրի մոնիթորինգի հաշվետվությունը /մանրամասն նկարագրած արդյունքներով/	Մանրամասն նկարագրի վերջը	Կենտրոն		
6	Նշանակել Հայաստանի կառավարության ներկայացուցիչ՝ հետևելու մրցույթին նախքան դրա հաստատելը	նախքան մրցույթի հաստատելը	MoC MoFA		

2)Ծրագրի իրականցման ընթացքում

NO	Կետեր	Վերջնաժամկետ	Պատասխանատու անձ	հաստատված գինը	Անդրադարձ
1	Ներկայացնել Վ/Լ – վճարման լիազորագիր ճապոնական բանկին (գործակալի բանկին)	Պայմանագիրը կնքելուց հետո 1 ամսվա ընթացքում	Հայաստանի կենտրոնական բանկ		
2	Ապահովել, որ սարքավորումների գնումը և ծառայությունները օրենքով սահմանված կարգով ազատվեն մաքսային պարտավորություններից, ներքին հարկերից և այլ բյուջետային վճարումներից, որոնք կարող են ի հայտ գալ Ստացող կողմի երկրում				
	1) Ձեռնարկել համապատասխան միջոցներ սարքերի մաքսային պարտավորությունների ձևակերպման, ներքին հարկերից ազատվելու համար	Ծրագրի ընթացքում	Կենտրոն		
	2) Ապահովել ներքին փոխադրումը ծրագրի վայր	Ծրագրի ընթացքում	Կենտրոն		
3	Վերակահավորել լաբորատորիան անհրաժեշտ սարքավորումներով և կահույքով, Ծրագրով հայթայթված սարքավորումներով, ներառյալ անցքերը	Նախքան սարքավորման տեղ հասնելը	Կենտրոն	30,000 ԱՄՆ դոլար	

	պատուհանների վրա խողովակների համար, էլեկտրական հոսանքի մատակարարում և կահույք				
4	Համաձայնության գալ ճապոնական ֆիզիկական անձանց և/կամ երրորդ երկրի ֆիզիկական անձանց հետ, որոնց ծառայությունները կպահանջվեն Ստացող երկիր մուտք գործելու և մնալու այնտեղ գործը կատարելու համար:	Ծրագրի ընթացքում	Կենտրոն		
5	Ապահովել, որ սարքավորումների գնումը և ծառայությունները օրենքով սահմանված կարգով ազատվեն մաքսային պարտավորություններից, ներքին հարկերից և այլ բյուջետային վճարումներից, որոնք կարող են ի հայտ գալ Ստացող կողմի երկրում	Ծրագրի ընթացքում			
6	Կատարել բոլոր ծախսերը, որոնք կարող են ծագել Դրամաշնորհից դուրս՝ Ծրագրի իրականացման համար, ներառյալ՝ հարմարությունների ստեղծման, ինչպես նաև սարքավորումների տեղափոխման և ներդրման համար:	Ծրագրի ընթացքում	Կենտրոն		

7	Ներկայացնել Ծրագրի մոնիթորինգի զեկույցը պայմանագրի յուրաքանչյուր աշխատանքից հետո / ինչպիսիք են՝ տեղափոխումը, հանձնումը, տեղադրումը և օգտագործման ուսուցումը/	Ավարտից մեկ ամսվա ընթացքում	Կենտրոն		
	2) Ներկայացնել Ծրագրի մոնիթորինգի զեկույց /վերջնական/	Ծրագրի աշխատանքների ավարտի մասին պայմանագրի ստորագրումից մեկ ամսվա ընթացքում	Կենտրոն		
8	)Ապահովել հարմարություններ՝ էլ. հոսանքի, ջրի, հետհոսքի /դրենաժ/ և այլ կոմնակի հարմարությունների մատակարարումը, որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացման համար	Ծրագրի ընթացքում			
9	Ապահովել բավարար տարածք և սոցիալական միջավայր, որն անհրաժեշտ է Ծրագրի իրագործման համար	Ծրագրի ընթացքում	Կենտրոն		
10	Ներկայացնել զեկույց Ծրագրի ավարտի մասին	Ծրագրի ավարտից վեց ամսվա	Կենտրոն		

		ընթացքում			

3) Ծրագրի ավարտից հետո

NO	Կետեր	Վերջնաժամկետ	Պատ/անձ	Հաստատված գին	Հղում
1	Պահպանել և պատշաճ ու արդյունավետ օգտագործել Դրամաշնորհով ձեռք բերած սարքավորումը. Պահպանման գնի բաշխումը, ներառյալ՝ անհրաժեշտ գումարը պահեստամասեր գնելու, մաշվածությունը և նորոգումները, և սարքավորումների օգտագործումը/պահպանելը. Պահպանել կառուցվածքային պատշաճ գործողություն և պահպանում. Առօրյա /պարբերական ստուգում.	Ծրագրի ավարտից հետո	Կենտրոն	1,000 ԱՄՆ դոլ	
2	Իրագործել հրապարակայնություն Իրականացնել հանձնման արարողություն Իրականացնել հասարակական ճանաչում ինտերնետ կայքերի և լրատվական կենտրոնների միջոցով Հիշատակել և ներկայացնել Ծրագիրը	Ծրագրի ավարտից հետո	Կենտրոն		

	Կենտրոնի գիտական հոդվածներում Հիշատակել Ծրագիրը գտածոների ցուցադրման ժամանակ թանգարաններում և թանգարանային գրքույկներում Դնել Ճապոնիայի դրոշի տարբերանշանը Ծրագրով գնված սարքավորումների վրա				

(B/A: Banking Arrangement, A/P: Authorization to pay, N/A: Not Applicabe)

(Center: The Scientific Research-Center of the Historical and Cultural Heritage) (MoC: Ministry of Culture, MoFA: Ministry of Foreign Affairs)

No	Կետեր	Վերջնաժամկետ	Հաստատված գին (ճապոնական միլիոն իեն)*	Հղում
1	Սարքավորումների գնում, տեղադրում և նախնական թրեյնինգ	Ծրագրի ընթացքում		
	1) Կազմակերպել հետևյալ փոխադրման տեսակները			
	a) Ճապոնիայից ապրանքների փոխադրում ծովային ճանապարհով Ստացող երկիր			
	b) նավահանգստից զամաքային փոխադրում Երևան (CIP Երևան)			
	2) Ծրագրի վայրում սարքավորումների տեղադրման և դրանց աշխատեցման արժեքը			
	3) Նախնական թրեյնինգի արժեքը Ծրագրի վայրում			
2	Իրականացնել մանրակրկիտ նախագծում, առաջարկների աջակցություն և գնումների գործընթացի վերահսկողություն (խորհրդատվական ծառայություն)			

	Ընդամենը		• ••	

(Ծանուցում) Ստացող կողմի պարտավորությունների առաջընթացը կարող է հաստատվել ժամանակ առ ժամանակ ՃՄՀԳ-ի և Ստացող կողմի միջև գրավոր ծանուցմամբ:

2) Դրամաշնորհով ֆինանսավորվող Ստացող կողմի այլ պարտավորություններ

N.	**կետեր**	**վերջնաժամկետ**	**Գումարը (միլիոն ճապոնական իեն)**
1	Գնել սարքավորումները և կազմակերպել հետևյալ փոխադրման տեսակները՝ 1) Ճապոնիայից ապրանքների փոխադրում ծովային ճանապարհով 2) նավահանգստից ցամաքային փոխադրում Երևան (CIP Երևան)		
2	Իրականացնել մանրակրկիտ նախագծում, առաջարկների աջակցություն և գնումների գործընթացի վերահսկողություն (խորհրդատվական ծառայություն)		
	Ընդամենը		

(Ծանուցում) Ստացող կողմի պարտավորությունների առաջընթացը կարող է հաստատվել ժամանակ առ ժամանակ ՃՄՀԳ-ի և Ստացող կողմի միջև գրավոր ծանուցմամբ:

(Նամակի վերնագիր)

Առդիր

(օրինակ)

Սույնով, հայտնում ենք Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությանը, որ համաձայն ենք կիրառել դրամաշնորհի համաձայնագրի

նախագիծը Հրշեջ-փրկարարական սարքավորումների բարելավման ծրագրի համար, որի առաջարկը ներկայացվել է 2017թ. նոյեմբերի 8-ին:

«Հրշեջ-փրկարարական սարքավորումների բարելավման ծրագրի» դրամաշնորհային համաձայնագրի լիազորված անձանց տվյալների հետ կապված տեղեկատվությունը, որը պահանջվում է վերը նշված գրությամբ, հետևյալներն են.

1. Ստորագրողի անուն-ազգանունը,
2. Կազմակերպության անվանումը, պաշտոնը,
3. Ֆիզիկական հասցե
4. Հեռախոսահամարը և ֆաքսի համարը
5. էլեկտրոնային հասցեն

Կցված է.

Հիմնական փաստաթղթերի պատճենները ապահովում են, որ կազմակերպությունը վերոնշյալով պնդում է, թե այս խնդրի համար լիազորված է ներկայացնելու կառավարությունը: